

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՈՍՍԵՒՆ ԱՍԼԱՆԱԲԱՂԻ

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԻՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

**ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2017

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ *մանկ. գիտ. թեկնածու*
Կ.Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ի.Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
մանկ. գիտ. թեկնածու
Ա.Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 20.12.2017 թ. ժամը 12⁰⁰– Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի, 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 20.11.2017 թ. –ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա.Հ. ՄՎԱԶՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Օտար լեզուների ուսուցման գործընթացում նոր մեթոդաբանական մոտեցումների կիրառումը բերում է ուսուցման ավանդական մեթոդների և հնարների հաղթահարմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Այդ համատեքստում սկզբունքային նշանակություն ունի մշակութային մոտեցման կիրառումը, քանի որ մեթոդաբանները և մանկավարժներն առաջ քաշեցին մշակույթի ուսուցման գաղափարը, որը ենթադրում է ոչ միայն լեզվական, այլ նաև սոցիալ-մշակութային, միջմշակութային հաղորդակցման կարողությունների և հմտությունների ձեռք բերում:

Մշակութաբանական մոտեցման կիրառումը հնարավորություն է ստեղծում քննության առնել սեփական և թիրախային մշակույթի առանձնահատկությունները, համեմատել, բացահայտել դրանց ընդհանուր և տարբերակիչ կողմերը, բովանդակային բաղադրիչները:

Միջմշակութային հաղորդակցության ընթացքում մարդիկ փոխանակում են իրենց մտքերը, գաղափարները, պատկերացումները, նույնիսկ կարծրատիպերը: Ոչ մի կրթական տարածք, այդ թվում Իրանը չեն կարող շրջանցել նշված միտումները:

Մշակույթը լեզվի անբաժանելի մասն է կազմում, և հնարավոր չէ որևէ լեզու հասկանալ կամ հաղորդակցվել նրանով, առանց հաշվի առնելու սոցիալական փոխհարաբերությունները, որոնք տեղի են ունենում տվյալ լեզվական հանրության մեջ:

«Մշակույթ» հասկացությունը լինելով բազմիմաստ եզրույթ, սահմանվում է տարբեր գիտական ճանաչողական ոլորտների /փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության և այլն/ շրջանակներում: Նույնը վերաբերում է նրան առնչվող հասկացություններին՝ մշակութային արժեք, մշակութային խոսույթ, մշակութային իրակություն (realia) և այլն:

Այդ համատեքստում, մշակութային բնույթի տեքստերը, ինչպես նաև խոսույթները պետք է դառնան օտար լեզուների ուսուցման առարկա, այն տրամաբանությամբ, որ թիրախ մշակույթի ուսուցումը պետք է նպաստի սովորողների միջմշակութային հաղորդակցության կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Ինչպես հայտնի է, ձևական կրթությունը որոշակի կրթական քաղաքականության կնիքն է կրում: Այդ առումով Իրանը բացառություն չէ: Դպրոցում գիտելիքի փոխանցման և յուրացման նախապայման է ճիշտ կազմակերպված ուսումնական կամ ակադեմիական, հիմնականում փոխներգործուն հաղորդակցությունը: Ինչ վերաբերում է միջմշակութային հաղորդակցության ուսուցմանը կամ նրա արդյունավետության բարձրացմանը, ապա անհրաժեշտ է նախ և առաջ բացահայտել թիրախային լեզվի ուսուցմանը նպաստող կամ խոչընդոտող մշակութային գործոնները: Նրանցից կարելի է առանձնացնել լեզվակիրների նյութական և հոգևոր, ազգային, կրթական արժեքները, դիրքորոշումները, հավատալիքները, նախապաշարմունքները, կարծրատիպերը, հաղորդակցական վարքագիծը:

Հետազոտության կարևոր խնդիր է ուղղորդել դասագրքերի հեղինակներին ուսումնական նյութերի, գնական պարագաների ընտրության հարցում, վերանայել Իրանում շրջանառվող անգլերենի դասագրքերը նոր տեսական և մեթոդաբանական դիրքերից:

Վերլուծելով New Interchange Series դասագրքաշարը, որը ստեղծված է օտար լեզվի ուսուցման փորձագետների կողմից, համեմատվում են տեքստերը և նրանց ուղեկցող նկարները: Խնդիր է դրվում ցույց տալ, որ նկարները, նկարագարողումները ոչ միայն ծանոթացնում են սովորողներին օտարալեզու մշակույթին, այլև նպաստում կամ հեշտացնում են օտար լեզվի ուսուցման գործընթացը և անգլերենի ուսուցիչների գործը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն փաստով, որ Իրանում միջնակարգ դպրոցի աշակերտների անգլալեզու մարդկանց հետ շփման հնարավորությունները սահմանափակ են, և թիրախային մշակույթին ծանոթանալու այլընտրանքային միջոցները միշտ չէ որ մատչելի են նրանց: Միջնակարգ դպրոցի դասագրքերի ստեղծման և ներդրման գործընթացի բարելավման անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը:

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՍՍԱԿՆ Է մշակել Իրանի միջնակարգ դպրոցի անգլերենի դասագրքերի, ուսումնական նյութերի, տեքստերի, առաջադրանքների շարունակական կատարելագործման մեթոդական համակարգ, միտված սովորողների մշակութային իրազեկության զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ անգլերենի ուսուցման համակարգն է Իրանի միջնակարգ դպրոցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿՄԱՆ Իրանի միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցման գործընթացում մշակութային իրազեկության զարգացման մեթոդական համակարգն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- Ներկայացնել դպրոցական դասագրքերում ուսումնական նյութի ընտրության ժամանակակից մոտեցումները, հիմք ընդունելով սովորողների լեզվական մակարդակը, տարիքային առանձնահատկությունները, դրդապատճառներն ու պահանջումները:
- Հիմնավորել Իրանի կրթական տարածքում շրջանավոր դպրոցական անգլերենի դասագրքերի վերանայման, վերագնահատման անհրաժեշտությունը:
- Բացահայտել օտար լեզուների դասավանդման զարգացման միտումները և Իրանի կրթական համակարգի բարեփոխումները:
- Քննության առնել խնդրո առարկա դասագրքերը մշակութային իրազեկության, միջմշակութային հաղորդակցական իրազեկության զարգացման, աջակցման, մանկավարժության սկզբունքների, ինչպես նաև սովորողների մոտիվացիայի տեսանկյունից:
- Մշակել միջմշակութային բովանդակության ուսումնական նյութերի, տեքստերի վարժությունների ընտրության և կիրառման մեթոդիկա:
- Մշակել անգլերենի դասագրքերում դրդապատճառային ռազմավարությունների կիրառման մեթոդիկա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՍԸ

Մշակութային, միջմշակութային իրազեկության զարգացման, միջմշակութային հաղորդակցության բարելավման տեսանկյունից Իրանի միջնակարգ դպրոցի դասագրքաստեղծման գործընթացի ուսումնասիրությունը, անգլերեն դասագրքերի, ուսումնական նյութերի, տեքստերի ընտրության սկզբունքների հստակեցումը և ընտրությունը, անհրաժեշտ նախադրյալներ կստեղծեն նոր դասագրքերի որակը բարելավելու, դրանք նոր մշակութափոխ ուսումնական նյու-

թերով համալրելու, հստակ մեթոդական համակարգով հարստացնելու համար:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

1. Բացահայտվել են ավագ դպրոցի անգլերենի դասագրքերի բովանդակային առանձնահատկությունները:
2. Վերլուծվել են դասագրքերում առկա նկարագրողումները, պատմական-աշխարհագրական, մշակութային իրականությունները ներկայացնող պատկերները:
3. Գնահատվել է Իրանի անգլերենի դասագրքերի հաղորդակցական ներուժը և մշակութային բովանդակությունը:
4. Հիմնավորված է այն դրույթը, ըստ որի՝ յուրացնելով տարբեր մշակութային իրողություններ, շատ դեպքերում ի վիճակի չենք դրսևորել ճիշտ խոսքային հաղորդակցական վարքագիծ իրական լեզվական իրադրություններում: Ըստ այդմ, մշակույթը յուրացնելով հնարավոր է դառնում հասկանալ, գնահատել լեզվակիրների արժեքները, գործունեության բովանդակությունը:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ **մեթոդները.**

- Իրանի պարտադիր դասագրքերով աշխատող ուսուցիչների և աշակերտների հարցում, անկետավորում,
- Իրանում շրջանառվող անգլերենի դասագրքերի բովանդակության, որակի բարելավման նպատակով իրականացված հարցման արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության փորձարարական բազա է հանդիսացել Իրանի **Rasaei and Peikeh Saadat high schools** միջնակարգ (ավագ) դպրոցները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Մշակույթի ուսուցումն անհրաժեշտ է դիտարկել միջառարկայական կապերի ապահովման, հումանիտար գիտելիքի փոխանցման տեսանկյունից: Անգլերենի որպես երկրորդ օտար լեզվի ուսուցումը նպաստում է սովորողների կողմից մշակութային նորմերի յուրացմանը, այն դժվարությունների հաղթահարմանը, որոնք առաջ են գալիս թիրախ լեզվի ուսուցման գործընթացում:

2. Անհրաժեշտ է միջմաշկութային իրազեկության զարգացմանը միտված առաջադրանքները կատարել ուսուցման բոլոր փուլերում: Այդ գործընթացում սովորողների կարող են հանդես գալ որպես էթնոգրաֆ, ովքեր համեմատում են սեփական և թիրախային մշակույթները, հստակ գիտակցելով իրենց ազգամշակութային ինքնությունը: Այդ համատեքստում միայն լեզվական իրազեկության զարգացումը բավարար պայման չէ միջմաշկութային հաղորդակցություն իրականացնելու համար:
3. Կարևորվում է սովորողների սեփական փորձի ձեռք բերման անհրաժեշտությունը տարբեր իրադրություններում՝ սեփական և թիրախային մշակույթների տարբերությունները բացահայտելու գործում:
4. Մշակութային տարբերությունների առարկայական, գննական միջոցներով ներկայացումն օգնում է սովորողներին ճիշտ պատկերացում ունենալ լեզվական անհամարժեք միավորների մասին: Մշակութային և լեզվական տարբերությունները և ընդհանրությունները բացահայտելը հարստացնում է սովորողների ուսումնառության գործիքակազմը: Այդ համատեքստում մշակութային գիտելիքի յուրացումն ընկած է մշակութային, ինչպես նաև միջմաշկութային իրազեկության ձևավորման հիմքում:
5. Մշակութային իրազեկության ձևավորման վճռորոշ պայման է թիրախային լեզուն և մշակույթը ներկայացնող մարդկանց կենսակերպի, դիրքորոշումները, հավատալիքների և սպասելիքների հետևողական ուսումնասիրությունը: Այն նպաստում է ոչ միայն միջմաշկութային հաղորդակցման ունակություններն ընդլայնել, այլև սովորողների ինքնաձանաչման, ինքնատիպության բացահայտմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բացահայտվել են միջմաշկութային հաղորդակցական իրազեկության ձևավորման առանձնահատկություններն Իրանի կրթական համակարգում, հիմնավորվել է մշակութափոխան դասագրքաստեղծման մոդելի արդյունավետությունը, New Interchange Books դասագրքաշարում թիրախային լեզվի և մշակույթի բաղադրիչների վերլուծությամբ հանգամանորեն ներկայացվել են Իրանի հանրակրթական դպրոցի անզևրեն դասագրքերի բովանդակային և գործառական բնութագրերը:

Համեմատվել են Իրանում ստեղծված ավագ դպրոցի անգլերենի դասագրքերը անգլալեզու հեղինակների կողմից ստեղծված New Interchange Books դասագրքերի հետ:

Մշակութային բովանդակություն ունեցող տեքստերի և պատկերների, նկարների, պատկերազարդումների վերլուծության արդյունքում բացահայտվել են արդյունավետ մշակութափոխան դասագրքաստեղծման մոդելների առանձնահատկությունները, որոնք օգնում են հաղթահարել օտար լեզվի ուսուցման ընթացքում առկա հենքային, մասնավորապես՝ մշակութային գիտելիքների բացը:

Փորձարարական աշխատանքի արդյունքները ներկայացվել են համապատասխան եզրակացություններով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Մշակված է անգլերենի դասագրքերի լեզվանյութի և մշակութային տեղեկատվության, մշակութային իրողությունների, իրականությունների նկարների, պատկերների միջոցով ներկայացման առաջադրանքների և վարժությունների, ինչպես նաև տարբեր մեթոդական ավանդույթներ ունեցող դասագրքերի գնահատման մեթոդական համակարգ, որը կարող է կիրառվել անգլերենի դասավանդման ընթացքում և է նպաստել նոր դասագրքերի, ծրագրերի ստեղծմանը, նոր դասընթացների նախագծմանը ու կազմակերպմանը:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011 - 2012 թթ.) հստակեցվել է հետազոտության թեման, առաջադրվել է վարկածը, հավաքագրվել է հիմնախնդրին վերաբերող գրականությունը, ձևակերպվել է հետազոտության նպատակը և խնդիրները:

Երկրորդ փուլում (2012 – 2013 թթ.) վերլուծվել են Իրանի միջնակարգ դպրոցում շրջանառվող անգլերենի դասագրքերը և միջմշակութային հաղորդակցության ուսուցման տեսանկյունից ուսուցման մեթոդները և ռամավարությունները, գնահատման չափանիշները:

Երրորդ փուլում (2013 - 2014 թթ.) արևմտյան և Իրանի անգլերենի դասագրքերի մասին իրականացվել է հարցում ուսուցիչների և աշակերտների շրջանում, հիմնավորվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը, ներկայացվել են հարցախույզի արդյունքները:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովվում է օտար լեզուների ուսուցման տեսությունների, ինչպես նաև անգլերենի դասագրքերի և վերլուծությամբ, Իրանի և անգլալեզու երկրների դասագրքերի համեմատությամբ, ժամանակակից հետազոտական մեթոդների կիրառմամբ և մշակված չափանիշների հավաստիությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ Իրականացվել է ԵՊՀ-ի մանկավարժության, անգլիական բանասիրության, անգլերենի թիվ 1 ամբիոնների համատեղ սեմինարներում, հրատարակված աշխատություններում, հոդվածներում, Իրանի միջնակարգ **Rasaei and Peikeh Saadat high schools** դպրոցներում: Հետազոտության արդյունքները ներդրվել են Իրանի միջնակարգ **Rasaei and Peikeh Saadat high schools** դպրոցներում:

Տպագրված աշխատանքները: Ատենախոսության թեմայով տպագրված են 4 գիտական աշխատանք:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Հետազոտության արդյունքների վերլուծությունն ուղեկցվում է տրամագրերով, նկարներով և գծապատկերներով: Ատենախոսությունը կազմում է 145 համակարգչային էջ:

Աշխատանքի ներածական մասում հիմնավորել ենք հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության վարկածը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին «Միջմշակութային հաղորդակցությունը և օտար լեզուների դասավանդումը Իրանի միջնակարգ դպրոցներում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Իրանի միջնակարգ դպրոցում կիրառվող ժամանակակից օտար լեզուների դասավանդման մեթոդները» ենթագլխում ներկայացվում են Իրանի կրթական իրողությունները, միջնակարգ

դպրոցի կառուցվածքը, դպրոցականների միջնակույթային հաղորդակցության հնարավորությունները, օտար լեզուների դասավանդման ավանդույթները, լեզվաքաղաքականության իրականացման միտումները և ռազմավարությունները արդի փուլում:

Իրանի միջնակարգ դպրոցի պահանջներին համապատասխան քննության են առնվում արևմտյան մեթոդական ավանդույթի շրջանակներում ձևավորված դասական և ժամանակակից օտար լեզվի դասավանդման մեթոդները: Հիմնավորվում է այն գաղափարը, որ լավագույն մեթոդներ չկան և մեթոդների լավագույն բնութագրերի համադրումը կարող է տալ ցանկալի արդյունք: Նշվում է, որ էլլեկտիկ մոտեցումը կարող է լինել արդյունավետ կոնկրետ ուսումնական իրադրություններում: Ընդհանուր գծերով ներկայացվում են Իրանի միջնակարգ դպրոցում օտար լեզուների դասավանդման նպատակները:

Ատենախոսի մանկավարժական փորձի հիման վրա առաջ է քաշվում այն դրույթը, ըստ որի՝ արտասահմանյան թեստային համակարգերը մեծ ազդեցություն են գործում Իրանի միջնակարգ դպրոցի անզլերենի դասագրքերի բովանդակության վրա, չնայած դրանցում շարունակում է գերակայել քերականությունը:

Երկրորդ «Դպրոցական դասագրքերի վերլուծության մեթոդաբանական տեսանկյունը. Իրանի ավագ դպրոցի անզլերենի պարտադիր դասագրքերը և նրանց թերությունները» ենթազիխում անզլերենի պարտադիր դասագրքերի վրա ազդում է այն հանգամանքը, որ մշակույթը չի ուսուցանվում առաջնահերթության սկզբունքով: Ըստ այդմ, նշված դասագրքերում մշակույթաբանական հայեցակերպը համապատասխան տեքստերով և լուսաբանող նյութերով չի ներկայացվում:

Շեշտադրվում է այն գաղափարը, որ թիրախային մշակույթը չի ներկայացվում բացահայտ՝ մշակութային տեքստերի միջոցով, ոչ ներակա, ինպիցիտ լուսաբանող նյութերի, նկարների, սխեմաների, քարտեզների միջոցով կամ այնպիսի տեքստերի միջոցով, որոնք անուղղակիորեն պարունակում են մշակութային տեղեկատվություն:

Դպրոցական ծրագրերով պարտադիր համարվող դասագրքերը հետաքրքրություն չեն կարող առաջացնել սովորողների մոտ, քանի որ նրանք մեծ հետաքրքրություն են դրսևորում արևմտյան կենսակերպի, կենսառձի, արժեքների, ընդհանրապես՝ մարդկանց կենսագործունեության նկատմամբ:

Սույն ենթագլխում մանրամասնորեն վերլուծվում են Իրանում շրջանառվող ավագ դպրոցի դասագրքերում լեզվական հմտությունների ձևավորման և զարգացման տեսանկյունից: Հստակորեն վերլուծվում են նշված դասագրքերի նոր բառապաշար, ընթերցանություն, խոսողություն բաժինները: Հաղորդակցական մոտեցման դիրքերից է լուծվում նոր բառերի ներմուծման և յուրացման հիմնախնդիրը:

Առաջարկվում է, որ դասագրքերի համապատասխան բաժիններում նոր բառերի ներմուծման փուլին նախորդեն կամ հաջորդեն գննականության սկզբունքի կիրառումը. տարբեր առարկաների պատկերներ, նկարներ, ժեստեր, նկարազարդումներ:

Ընթերցանության բաժնում ներկայացվում են թարգմանական, բազմընտրության, հարց ու պատասխանի վարժությունները և առաջադրանքները: Դրանք վերլուծվում են միջմշակութային հաղորդակցության ուսուցման տեսանկյունից:

Գրավոր և բնավոր խոսքի բաժինների վերլուծությամբ բացահայտվում են վերաբառադրման, փոխատեղման, փոխակերպման վարժությունների առանձնահատկությունները:

Երրորդ **«Հիմնախնդրի առաջադրումը, հետազոտության նպատակը, հարցադրումը, վարկածը, նշանակությունը և հիմնավորումը»** ենթագլխում հստակեցվում է հետազոտության հասկացական ապարատը, հիմնական հասկացությունների բովանդակային և գործառական բնութագրերը

Երկրորդ **«Լեզվի և մշակույթի հարաբերակցությունն օտար լեզվի ուսուցման նյութերում, միջմշակութային հաղորդակցությունը, ուսումնական և ավագ դպրոցի դասագրքերի ուսումնասիրության եղանակները»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, ներկայացնում է միջմշակութային հաղորդակցության հիմնադրույթները, առանձնահատկությունները, դրանց անդրադարձն Իրանի դասագրքերի հեղինակների կողմից:

Առաջին **«Մշակույթի և լեզվի ուսուցումը և մշակույթների ազդեցությունը (մայրենի և օտար) օտար լեզվի յուրացման վրա»** ենթագլխում վերլուծվում են «մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի բաղադրիչները՝ ավանդույթները, առասպելները, լեզուները, արժեքները, պատմությունը, կրոնը, քաղաքականությունը, աշխարհագրությունը և այլն:

Նշվում է, որ մշակույթի ուսումնասիրությունը դեռևս բավարար պայման չէ տարբեր խոսքային իրադրություններում հաղորդակցվելու համար, սակայն օգնում է հասկանալ և գնահատել լեզվակիրների մշակութային արժեքները, գործունեության նորմերը, այլ մշակույթների միջև գոյություն ունեցող տարբերությունները, յուրացնել լեզվակիրների խոսքային վարքագիծը:

Երկրորդ **«Անզլերեն դպրոցական դասագրքերի բովանդակության մշակութային լեզվաբանական բաղադրիչները»** ենթագլխում ներկայացվում է սովորողների պահանջմունքների և դասագրքերի անհամապատասխանությունը:

Մանրամասնորեն վերլուծվում են միջնակարգ դպրոցում շրջանավարտների երեք հիմնական դասագրքերը, դրանց բաղադրիչները և դասնյութերը: Ներկայացվում են նաև միջնակարգ դպրոցում Եվրոխորհրդի լեզվաքաղաքանության սկզբունքները, միջմշակութային հաղորդակցության ուսուցման ռազմավարությունները: Մահմանվում է «միջմշակութային իրազեկություն» հասկացությունը:

Ընդհանուր գծերով ներկայացվում է մշակութային քննադատական մոտեցումը, ըստ որի՝ բացատրվում, լուսաբանվում և բացահայտվում են մշակութային բնույթի տարբերությունները: Հանգամանորեն վերլուծվում են նաև երկխոսական ներսի «emic» և դրսի «etic» կամ ներքին և արտաքին մոտեցումները:

Հետազոտության խնդիրների լուծման համատեքստում առանձնացվում է փորձարարական ուսուցման մոտեցումը կամ Կոլբի փորձարարական ուսումնառության շրջափուլը: Եզրահանգման մեջ առաջարկվում է նշված չորս մոտեցումը համադրել:

Երրորդ **«Ժամանակակից օտար լեզուների դասագրքերին ներկայացվող մեթոդաբանական և ընդհանուր պահանջները, վերջնարդյունքների և տվյալների վերլուծությունը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Հետազոտության մասնակիցները, ենթատեքստը, նախագծումը և նյութերը»** ենթագլուխը ներկայացնում է գիտավորժի անցկացման նպատակը, մասնակիցների թիվը, նրանց լեզվական մակարդակը:

Նշվում է, որ փորձարարական և ստուգողական խմբերի մեջ ընդգրկված ուսանողները երկլեզու են, տարիքը՝ 17, լեզվական մակարդակը՝ շեմային (Threshold), ետշեմային (Vantage). միջին (Effective

operational proficiency): Թե՛ փորձարարական, թե՛ ստուգողական խմբերը բաղկացած են 30 ուսանողից: Փորձարարական ուսուցումն իրականացվել է (Rasaei and Peikeh Saadat high schools) դպրոցներում:

Փորձարարական խմբում ներգրավված աշակերտներն աշխատել են New Inter-change դասագրքով, որի հետ աշխատանքը պահանջում է կիրառվեն ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներ: Այն ներկայացնում է Goal Language ինստիտուտը, իսկ ստուգողական խումբը ներկայացնում է Rasaei and Peikeh Saadat ավագ դպրոցը, որտեղ դասավանդումն իրանացվում է ավանդական մեթոդներով, պետական պարտադիր դասագրքերով: Փորձարարական խմբին սովորեցնում են անգլալեզու երկրների մշակույթի տարբեր ասպեկտները, իսկ ստուգողական խմբում մշակույթի ուղղակի, նպատակամղված ուսուցում չի իրականացվում:

Փորձարարական ստուգման ընթացքում կիրառվում են թեստավորում (նախաթեստային և հետթեստային փուլերով): Հետազոտության կորպուսային տվյալների բազան ներկայացնում է յոթ անգլերենի ուսուցման դասագրքեր՝ A. Interchange Third Edition Series, a revised edition of New Interchange, under the rubric of CDA. Այս շարքը ներառում է չորս դասագիրք: Սույն դասագրքաշարը ներկայացնում է աշխարհում մեծ տարածում ունեցող անգլերենը որպես երկրորդ լեզու և անգլերենը որպես օտար լեզու դասագրքերը: Դրանք լայնորեն կիրառվում են նաև Իրանում: Փորձարարական ուսուցման ընթացքում վերլուծության են ենթարկվում նաև բուն Իրանի ավագ դպրոցի համար նախատեսված Անգլերենը որպես օտար լեզու դասագրքերը, որոնք տպագրված են ԿԳ նախարարության կողմից¹:

Ինչպես արդեն նշվեց, New Interchange դասագրքերում բավականին լավ են ներկայացված բոլոր լեզվական հմտությունների զարգացմանը միտված վարժությունները և առաջադրանքները:

Հետազոտության ընթացքում վերլուծվել են 210 նկար Իրանի ավագ դպրոցի դասագրքերից և 450 նկար New Interchange դասա-

¹ Birjandy, P., Soheili, A., Noroozi, M., & Mahmoodi, Gh. (2012). English Book Tehran: Textbook Publishing Company of Iran.

Birjandy, P., Noroozi, M., & Mahmoodi, Gh. (2012). English Book 2. Tehran: Textbook Publishing Company of Iran.

Birjandy, P., Noroozi, M., & Mahmoodi, Gh. (2012). English Book 3. Tehran: Textbook Publishing Company of Iran.

գրքաշարից: Լուսաբանող նյութերը, նկարները, պատկերները վերլուծվել են հստակ թեմաների շրջանակներում՝

1. Ծիսակատարություններ և հագուստի տեսակներ – Ceremonies and kinds of clothing
2. Անձնային և սոցիալական հարաբերություններ – Personal and social relations
3. Ընտանիքներ և դերերն ընտանիքներում – Families and roles within families
4. Տոնակատարություններ և արձակուրդներ – Celebrations and holidays
5. Հոբբի – Hobbies
6. Ողջույններ – Greetings
7. Ոչ խոսքային հաղորդակցություն – Nonverbal communication

Փորձարարական և ստուգողական խմբերի համեմատական վերլուծության արդյունքները ներկայացված են համապատասխան աղյուսակներում: Նշված թեմաների շրջանակներում մշակութային իրազեկության մակարդակը փորձարարական խմբերում բարձր է ստուգողական խմբերից, որոնք սովորում են անզլերենը պետական ավանդական դասագրքերով:

Table 3.6.

High School Books and Total Number of Pictures in them

| Books | Total number of Pictures |
|--------|--------------------------|
| Book 1 | 78 |
| Book 2 | 62 |
| Book 3 | 70 |
| Sum | 210 |

Հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ New Interchange book դասագրքաշարով սովորող աշակերտներն ավելի լավ են յուրացնում թիրախային մշակու-

թային իրողությունները, արժեքները, իրակությունները: Նույնը հաստատվում է գնահատության սկզբունքով ընտրված տվյալ դասագրքերում առկա նկարների քանակական և որակական վերլուծությունը՝

Table 3.7.

Number of Pictures in the New Interchange Book Series

| Books | Total number of pictures in each book |
|-------------------------------------|---------------------------------------|
| Intro | 170 |
| New Interchange book 1 | 95 |
| New Interchange book 2 | 100 |
| New Interchange book 3 | 85 |
| Total number of pictures in 4 books | 450 |

Նույնը վերաբերում է ծիսակատարությունները և հագուստի տեսակները ներկայացնող նկարների ամփոփիչ աղյուսակին՝

Table 3.8.

Pictures and contents related to Ceremonies and kinds of clothing in Iranian High School English Books

| Books | Ceremonies and kinds of clothing | Frequency of P/T ROC | Percentage of P/T ROC | Frequency of P/T REC | Percentage of P/T REC |
|--------|----------------------------------|----------------------|-----------------------|----------------------|-----------------------|
| Book 1 | 69 | 66 | 95.6% | 3 | 4.4% |
| Book 2 | 55 | 54 | 98.2% | 1 | 1.8% |
| Book 3 | 66 | 65 | 98.5% | 1 | 1.5% |
| Total | 190 | 185 | 97.5% | 5 | 2.5% |

Ատենախոսությունը ներկայացնում է նաև կատարված վերլուծության ամփոփիչ տվյալների տրամագրերը: Օրինակ




Figure 3.5. Pictures and contents which represent ceremonies and kind of clothing

Համապատասխան վերլուծությունը ցույց տվեց, անգլերենի ուսուցման բոլոր փուլերում New Interchange book դասագրքաշարով սովորող աշակերտները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում թիրախային մշակույթի նկատմամբ: Շարունակաբար ձևավորվում է նրանց մոտ դրոպապատճառային, ինչպես նաև միջմշակութային իրազեկություն: Ուսուցման անձնակողմնորոշիչ, փոխներգործուն մեթոդներով թերախային մշակույթի ուսումնասիրությունը նպաստում է ոչ միայն ուսումնասիրվող, այլև սեփական մշակույթի նկատմամբ հետաքրքրության աճին:

Փորձարարական ուսուցումն հաստատեց հաղորդակցական մոտեցման սկզբունքներով ստեղծված և ուսուցման փոխներգործուն մեթոդներով ուսումնասիրվող անգլերենի դասագրքերի արդյունավետությունը, հատկապես երբ խնդիր է դրվում զարգացնել սովորողների մշակութային իրազեկությունը լեզվի և մշակույթի ուսուցման ճիշտ հարաբերակցությունը պահպանելով, առաջին պլան մղելով գննականության և բնագրայնության սկզբունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Անհրաժեշտ է միջմշակությանն հաղորդակցության ուսուցման գործընթացում ձևավորել սովորողների մոտ մշակությանն իրազեկություն, որը ենթադրում է լինել հանդուրժող այլ մշակությունների նկատմամբ, մշակությանն տարբերություններին մոտենալ մարդասիրության, մշակությունների երկխոսության դիրքերից:

2. Ուսուցիչները պետք է զարգացնեն սովորողների լեզվի կիրառման մշակությանն հենքը կամ հենքային գիտելիքները, ընտրել ուսուցման ժողովրդավարական ոճեր, վերհանել սովորողների մշակութափոխան լեզվական գիտելիքները, որոնք նպաստում են նախապաշարմունքների և տարրմբռնումների հաղթահարմանը, մշակությանն ենթատեքստի ճիշտ բացահայտմանը:

3. Ուսումնական նյութերն ու պարագաները, դասագրքերն ընտրելիս և ներմուծելիս, պետք է հաշվի առնել մշակությունների երկխոսության առանձնահատկությունները, ոչ միայն սովորողների և լեզվակիրների մշակությանն տարբերությունները, այլև ընդհանրությունները:

4. Ուսուցման ընթացքում լեզվակիրներին բնորոշ տարբեր իրական խոսքային իրադրությունների մոդելավորումն օգնում է վերհանել թե՛ մշակությանն տարբերությունները, թե՛ ընդհանրությունները:

5. Ուսուցման ավարտական փուլում սովորողները պետք է կարողանան ոչ միայն համեմատել թերախային լեզվի մշակությանն իրողությունները, այլև ներկայացնել իրենց մոտեցումներն ու պատկերացումները թե՛ իրենց կենսագործունեության, կենսակերպի, թե՛ ուսումնասիրվող լեզուն ներկայացնող մշակույթի մասին:

6. Փորձարարական ստուգումը ներառում էր տարբեր կրթական տարածքներում ստեղծված անգլերենի դասագրքերի համեմատական վերլուծությունը, այդ դասագրքերի նկատմամբ ուսուցիչների և աշակերտների մոտեցումների և պատկերացումների բացահայտումը: Հետազոտության նախնական վարկածը, ինչպես նաև առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը հաստատվեց փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների համեմատական վերլուծությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. **Aslanabadi H., Aslanabadi Sh.**, *Crucial Need for Communicative Approaches and Intercultural Communication in Teaching English at Iranian Schools in Government Sector.* // International Review of Social Sciences and Humanities, Volume 6, Number 1, Barpeta-India, October 2013, pp. 161-167; www.irssh.com
2. **Karapetyan K., Aslanabadi H.**, *Evaluating Iranian High School Textbooks* // Foreign Languages in Higher Education, Yerevan, YSU, 2015, pp. 133-138.
3. **Aslanabadi H.**, *Development of Cultural Awareness in Iranian English Classes* // Foreign Languages in Higher Education, Yerevan, YSU, pp. 197-203
4. **Aslanabadi H.** *The Effect of Vocabulary Learning Strategies in Iranian English Classes* // Languages and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge, 7, Yerevan, Lusakn, 2016, pp. 161-176.

Развитие культурной компетенции на уроках английского языка в средней школе Ирана

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык).

Защита диссертации состоится 22-го 2017г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

В диссертационном исследовании рассматриваются проблемы развития культурной компетенции посредством создания и применения оптимальной модели совершенствования учебников английского языка в Иране.

Актуальность исследования. Глобализационные процессы в мире порождают новые вызовы в коммуникации. Люди, представляющие разные культуры, входят в контакт между собой. В процессе межкультурной коммуникации люди обмениваются понятиями, мыслями и информацией. В этом плане подчеркивается значение тех учебников, в которых в должной мере представлены аутентичные материалы и приемы репрезентации изучаемой культуры.

Актуальность исследования обусловливается тем фактом, что большинство иранских учащихся в процессе обучения английскому языку должны преодолеть трудности, связанные также с изучением культуры носителей изучаемого языка. У них ограниченные возможности непосредственного контакта с носителями языка, а также не всегда доступны альтернативные средства ознакомления с изучаемой культурой.

Целью исследования является изучение и анализ содержательных характеристик учебников английского языка старшей школы Ирана с точки зрения развития культурной компетенции учащихся, обоснование эффективности модели анализа и составления новых учебников, отвечающих современным требованиям, предъявляемым к учебникам иностранных языков.

Задачи исследования:

- Исследовать современные подходы к отбору языкового материала в учебниках, с учетом возрастных, мотивационных, языковых характеристик учащихся.

- Обосновать необходимость пересмотра и переосмысления действующих учебников английского языка, находящихся в обороте в образовательной системе Ирана, с учетом тенденций развития методов преподавания иностранных языков и образовательных реформ в Иране.
- Разработать методическую систему внедрения учебных материалов, текстов и упражнений, в процессе обучения, а также стратегий создания учебников.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования. Выявлены содержательные характеристики учебников английского языка старшей школы Ирана, проанализированы иллюстративные материалы, которые представляют исторические, географические, культурные реалии в учебниках. Вынесена оценка коммуникативного потенциала рассмотренных учебников и их культурное содержание. Разработана оптимальная модель изучения создания и применения новых учебников, с целью усовершенствования процесса обучения иностранным языкам.

Теоретическое значение исследования:

Доказано, что учебники английского языка могут помочь учащимся решать разные коммуникативные задачи в реальных учебно-речевых ситуациях. Была создана оптимальная модель развития межкультурной компетенции посредством пересмотра учебников английского языка, предназначенных для старшей школы Ирана. Разработана система упражнений и заданий с соответствующими аутентичным текстами, а также критерии оценивания школьных учебников.

Практическое значение исследования.

Предложенная оптимальная модель развития межкультурной компетенции посредством пересмотра учебников английского языка может способствовать проектированию новых курсов обучения иностранным языкам, созданию новых программ и учебников, а также использованию их в разных образовательных и учебных ситуациях.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Основное содержание диссертации изложено на 145 страницах.

По теме диссертации опубликованы четыре научные статьи.

THE DEVELOPMENT OF CULTURAL AWARENESS IN IRANIAN SECONDARY SCHOOL ENGLISH CLASSES

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and education methodology" (English).

The defense of the thesis will be held at 12⁰⁰ on 22, 2017 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Abovyan, Address: 0010, Tigrana Mets ave. 17, Yerevan. 0010

SUMMARY

This thesis aims to develop students' cultural awareness through creating and use an effective model to improve English textbooks in Iran for secondary school.

The relevance of the research. In such globalized world, life commands respective challenges in communication, which will bring people into constant contact with people of different cultures and languages. It is certainly through this intercultural communication that people need to exchange information cognitive notions, thoughts etc.

The use of suitable textbooks including authentic materials and techniques for presenting culture in the classroom is widely recommended.

The vitality of the research is preconditioned by the fact that the majority of Iranian students are exposed to the English speaking people culture. They have limited contact possibilities with native speakers and alternative means of familiarizing with foreign culture are not always available.

The aim of the study is review the contents of Iranian high school English language textbooks from the point of view of developing cultural competence, examine how this study can help develop textbooks in parallel with needs of modern foreign language teaching methods.

The objectives of the research:

- represent modern approaches to select school textbook language material, taking into **account** learners' language level, age peculiarities, motives and needs,
- substantiate the necessity of reviewing and reevaluating school English textbooks circulating in Iran educational system, taking into account the tendencies of developing foreign language teaching methods and educational reforms in Iran,
- develop the methodology of selecting and applying academic materials, texts and exercises as well as motivational strategies of creating textbooks.

Scientific novelty of the research

- The research reveals the content characteristics of high school English textbooks and analyses of illustrative materials, as well as the images to present the historic-geographical, cultural realities in the textbooks. It evaluates the communicative potential of Iran English textbooks and their cultural content.
- The research works out an effective model of promoting culture awareness through improving English textbooks by using modern teaching/learning strategies and technologies.
- The elaborated system of reviewing, evaluating and changing secondary school English textbooks in Iran takes into account modern methods and principles of selecting and using texts and exercises.

The main theoretical and practical significance of the research:

The research proves that English textbooks should help language learners to deal with eventually communicative tasks in real contexts. It is created an effective model of developing culture awareness through updating English textbooks and their contents to improve the present situation of foreign language teaching, especially English in Iran.

It develops the system of tasks and exercises with authentic texts, the criteria of evaluating school textbooks. It can contribute to creating new English textbooks and applying them in different teaching settings and situations.

The structure and volume of the thesis: the content of research is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices.

Four scientific articles have been published covering the topic of the dissertation.

The total number of computer pages is 145 (without appendices).